## Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

**ՊԵՏԵՐԲՈՒՐԳ,** *պ. Ն. Ա–ցեն.—Պ. Մ. ստացել էր կէս տարուայ ընթացքում բոլոր համարները եւ չէր բարեհաճել ոչ մի կարգադրութիւն անել երկրորդ կիսամեակի մասին։ Տարօրինակ է Ձեր պահանջը որ մենք ինքներս վճռէինք՝ երկրորդ կիսամեակում ուղարկել համարները, փոխարէն ստացուած «Բ.»-ի մի գրքի։ Չէ որ մենք միայն ենթադրել կարող էինք որ «Բ.»-ի հրատարակիչը միեւնոյն ժամանակ «Մուրճի» կիսամեայ բաժանորդն է. կարծում ենք պարտադիր չէ խմբագրութեան համար իր բաժանորդների կենսագրութեան գիտութիւնը... Շատ պարզ է որ իւրաքանչիւր նոր հրատարակութիւն ինքն է առաջինը նամակով դիմում եւ հրատարակութիւնների փոխանակութիւն առաջարկում։ Ինչ վերաբերում է յայտարարութիւնների պայմաններին—կարդացէք «Մուրճ»-ի շապկի վերջին երեսի վրայ տպածը. հաշիւներ ներկայացնել եւ նամակագրութիւն սկսել այդ առիթով միանգամայն աւելորդ է։*

**ՌՈՒՍՉՈՒԿ,** *պ. Գ. Մ.—Աւելի լաւ է որ դուք համակերպուէք մեր ընդհանուր պայմաններին, քան մենք իւրաքանչիւր քաղաքի համար առանձին կանոններ հրատարակենք։ Սկզբի համարները ուղարկեցինք, սակայն շարունակութիւնը կը լինի միմիայն երբ ստացուի առաջին կիսամեակի բաժանորդագինը լրիւ։ Դրամը պէտք է պոստով փոխադրել։*

---

## Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

*Անցեալ №-ում.*

| *երես* | *տող* | *տպուած է* | *պէտք է լինի* |
|---|---|---|---|
| 174 | 6 վ. | 3 ֆուտ | 2 պ. 7 ֆ. 92 մախալ |
| 177 | 9 » | գիւղերում | գետերում |
| 178 | 37 » | Ալգիր | Ալգէտ |

---